ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԾ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշեց.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2022թ.-ի հուլիսի 1-ին, ժամը 11:00-ին՝ նախաձեռնողների սահմանած օրակարգով Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելու և խորհրդին միջնորդություն ներկայացնելու մասին:

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն իր 2022 թվականի հունիսի 28-ի նիստում որոշել է հանդես գալ որոշում ներկայացնելու նախաձեռնությամբ եւ շրջանառության մեջ դնել «Ազգային ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթելյանին Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ» և «Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հակոբյանի՝ որպես Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի որոշման նախագծերը: Ազգային ժողովի որոշման նախագծերը վերաբերում են ՀՀ Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանը և հաշվի առնելով այն հանգամանքը, որը հերթական նստաշրջանը ավարտվել է և մինչ սեպտեմբերի 12-ին նոր հերթական նստաշրջան գումարվելը ևս անհրաժեշտ է ապահովել ՀՀ ԱԺ մարմինների բնականոն գործունեությունը հարկ ենք համարում հարցերի քննարկումն իրականացնել ՀՀ արտահերթ նստաշրջանով:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

30.06.2022թ.